

Հայաստանի Հանրապետության մեկնաբանությունները Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի հորհրդատվական կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կարծիքի կապակցությամբ

I. Ընդհանուր նկատառումներ

Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիային համապատասխան ստեղծված հորհրդատվական կոմիտեի /այսուհետ՝ Կոմիտեի/ 2002 թվականի հունիսի 10-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացրել է Հայաստանում վերը նշված կոնվենցիայի կատարման վերաբերյալ իր կարծիքը:

Հայաստանի Հանրապետության իշխանությունները բարձր են գնահատում հորհրդատվական կոմիտեի կարծիքը և գտնում են, որ Կոմիտեի արժեքավոր, արդիական և օգտակար առաջարկությունները մեծապես կնպաստեն Շրջանակային կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների հետագա կատարմանն ուղղված Հայաստանի իշխանությունների ջանքերին:

Հայաստանի Հանրապետությունը ևս մեկ անգամ հավաստում է իր ստանձնած միջազգային պարտավորությունները կատարելու վճռականությունը և պատրաստակամությունը *pacta sunt servanda* սկզբունքին համապատասխան:

Մինևույն ժամանակ Հայաստանի Հանրապետության իշխանությունները մեկ անգամ ևս շեշտում են, որ Կոմիտեի կողմից նշված որոշ թերություններ պայմանավորված են նորանկախ, զարգացող և անցումային ժամանակաշրջանում գտնվող պետությանը բնորոշ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և կառուցվածքային փոփոխություններից բխող դժվարություններով: Հայաստանի Հանրապետության պարագայում, Կոնվենցիայի կատարումը պետք է դիտարկել նաև Հայաստանի քաղաքական, ժողովրդագրական, պատմական, սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների և աշխարհագրական դիրքով պայմանավորված որոշակի բարդությունների համատեքստում:

Շրջանակային կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման տեսակետից անհրաժեշտ ենք համարում նշել, որ դրանց կատարումն ամրապնդվում է Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված այլ միջազգային պայմանագրերի՝ Հայաստանի Հանրապետության համար ուժի մտնելով՝ մասնավորապես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի, դրա լրացուցիչ 1-ին, 4-րդ և 7-րդ արձանագրությունների, ինչպես նաև Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի:

Ինչպես նշվել է Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցում և խորհրդատվական կոմիտեի հետ Հայաստանի իշխանությունների անմիջական հանդիպման ընթացքում և Կոմիտեի կարծիքում, Հայաստանի իշխանությունները կարևորում են Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ լիարժեք օրենսդրական դաշտի (մասնավորապես՝ Ազգային փոքրամասնությունների մասին օրենքի) ընդունումը և օրենսդրության որոշակի բարեփոխումները, ինստիտուցիանալ մակարդակով համապատասխան կառույցի ստեղծումը և և գործնական որոշ քայլերի կատարման ակտիվացումը:

**II. Կոմիտեի հիմնական եզրահանգումների և մեկնաբանությունների վերաբերյալ
Հայաստանի Հանրապետության մեկնաբանությունները և առարկությունները**

1 . 3-րդ հոդվածի կապակցությամբ

ա) «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենք

1. Կոնվենցիայի արդյունավետ կատարումն ապահովելու համար Հայաստանը պետք է օրենսդրական համապատասխան լիարժեք բազա ստեղծի:

Օրենսդրական հստակ կարգավորումները հնարավորություն կտան լուծելու բազմաթիվ հարցեր, որոնք գործնականում արդեն իսկ իրականացվում են Հայաստանի իշխանությունների կողմից և ուղղված են ազգային փոքրամասնությունների լեզվի, մշակույթի, պատմության պաշտպանությանն ու պահպանությանը:

«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը բավականաչափ լայն քննարկումների արդյունքում, որոշակի լրամշակումների ենթարկվելով, ներկայացված է ՀՀ կառավարությանը¹:

Հաշվի առնելով Կոմիտեի մտահոգությունը, որ Հայաստանի օրենսդրությունում չկա ազգային փոքրամասնությունների հստակ սահմանում, այնուամենայնիվ, նախագծում լուծված է նաև այդ խնդիրը²:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության առումով ևս օրինագիծը բավականաչափ արմատականորեն է լուծում այդ հարցը:

Օրինագծում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքները բաժանվել են երկու խմբի.

-ընդհանուր-քաղաքացիական, որոնցով նրանք բացարձակապես հավասարեցված են Հայաստանի Հանրապետության ազգային մեծամասնություն հանդիսացող քաղաքացիներին և

-առանձնահատուկ-Էթնիկական, որոնց իրացման ուղղությամբ էլ օրինագծում բերված են մի շարք երաշխիքներ: Առանձնահատուկ-Էթնիկական իրավունքների թվին են դասված քաղաքացիների ազգային (Էթնիկական) ավանդույթների, ուսովորույթների, կրոնական հավատալիքների ու համոզմունքների, ազգային լեզվի պահպանման, ինչպես նաև ազգային (Էթնիկական) ավանդույթներից, սովորույթներից ու կրոնական հավատալիքներից բխող ծիսակարգեր կազմակերպելու և դրանց մասնակցելու իրավունքները:

Օրինագծում ազգային փոքրամասնություններին տրված է վերը նշված բոլոր իրավունքներից ազատորեն օգտվելու իրավունք՝ նշելով միայն, որ այդ իրավունքներից օգտվելը չպետք է հանգեցնի այլ ազգությունների ներկայացուցիչների համապատասխան իրավունքների ոտնահարմանը:

բ) Եզդիների և քրդերի էթնիկական պատկանելության խնդիրը

Հայաստանում ոչ պետական և ոչ էլ հասարակական մակարդակներով երբեք հարց չի դրվել որևէ ազգության հարկադիր կերպով այլ ազգության դասելու կամ ուծացման խնդիր:

¹ Ընդ որում, այդ քննարկումներին մի քանի անգամ մասնակցել են իրենք՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները: Ուստի հայկական իշխանությունները համաձայն չեն Կոմիտեի այն կարծիքի հետ, թե ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ներգրավված չեն կառավարության նախաձեռնած օրենքի նախագծի նախապատրաստական աշխատանքներին (տես Կարծիքի 23 կետը):

² Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի համար ԱՊՀ «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիան ուժի մեջ է մտել 1997թ. հունվարի 10-ից:

Հայ Էթնոքաղաքականության կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ ավանդականորեն եղել է հանդուրժողականությունը այլազգիների նկատմամբ:

Ինչ վերաբերում է եզդիների ու քրդերի ինքնության որոշման տարածայնություններին, ապա պետք է նշել, որ այդպիսի խնդիր իրոք կա, բայց դա զուտ այդ երկու էթնոսների խնդիրն է: Հայկական պետության և հայ հասարակության տասկետին համապատասխան՝ հայկական իշխանությունների կողմից չպետք է ոչ մի միջամտություն լինի, թե ազգային փոքրամասնության այս կամ այն ներկայացուցիչը իրեն որ ազգի հետ կնույնացնի:

Կոմիտեի ուշադրությունն ենք հրավիրում այն փաստի վրա, որ միանգամայն ժողովրդավարական և Կոնվենցիայի ոգով լուծում է տրվել օրինագծում (հոդված 4), որտեղ ուղղակիորեն նշված է, որ «Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի ինքն է ազատորեն որոշում իր ազգային պատկանելիությունը»: Այդ նույն հոդվածում ամրագրված է նաև հետևյալ դրույթը. «Ոչ ոք իրավունք չունի Հայաստանի Հանրապետության քաղաքացուց իր ազգային պատկանելիության ապացուցում կամ դրանից հրաժարում պահանջել»:

գ) Ազգային փոքրամասնությունների կարգավիճակը ոչ քաղաքացիների վրա տարածելը

Թեև Հայաստանի Հանրապետության 37-րդ հոդվածը³ երաշխավորում է ազգային փոքրամասնություններին պատկանող ՀՀ քաղաքացիների իրենց ավանդույթների պահպանման, լեզվի և մշակույթի զարգացման իրավունք, այնուամենայնիվ, ելնելով ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածից (որի համաձայն Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների սպառնիչ չեն և չեն կարող մեկնաբանվել որպես մարդու և քաղաքացու այլ հանրաճանաչ իրավունքների և ազատությունների բացառում), ինչպես նաև իր պարտավորությունների լույսի ներքո՝ Հայաստանի իշխանությունները չեն բացառում Շրջանակային կոնվենցիայի կիրառման ոլորտ ոչ քաղաքացիներին ներգրավելու հարցը քննարկելու հնարավորությունը:

դ) Մարդահամարի տվյալները

Հարկ ենք համարում նշել, որ 2001թ. մարդահամարի արդյունքներով ՀՀ բնակչության ազգային կազմը բնութագրող ցուցանիշները նախատեսվում են ստանալ փաստաթղթում նշված ժամկետից ավելի ուշ՝ 2003 թվականին: 2002թ. ընթացքում, մասնավորապես սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին նախատեսված է հրապարակել միայն հանրապետության մակարդակով առկա և մշտական բնակչության թվաքանակները:

2. 4-րդ հոդվածի կապակցությամբ

ա) Օմբուդսմենի մասին օրենքի ընդունումը

Հայաստանի Հանրապետության իշխանությունները խիստ շահագրգռված են «Օմբուդսմենի մասին» օրենքի ընդունմամբ: Ուղղակի դրա ընդունման հետաձգումը կապված է սահմանադրական բարեփոխումների հետ: Օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողովի օրակարգում է գտնվում:

³ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծով «քաղաքացի» բառը փոխարինվում է «անձ» բառով, որը փաստորեն ենթադրում է ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը:

Սահմանադրության համապատասխան փոփոխությունները⁴ պետք է անցկացվեն,, որպեսզի ընդունվի «Օմբուդսմենի մասին» օրենք՝ առավել անկախ և վստահելի ինստիտուտ ստեղծելու նպատակով:

բ) Խտրականություն

Հայաստանի իշխանություններն այն կարծիքին չեն, որ առանձին հարցերով բողոքները, որոնք բխում են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից իրենց հիմքում ունեն փոքրամասնությանը պատկանելու դրդապատճառով իրավունքների խախտման ենթատեքստ:

Տարբեր պատճառներով ազգությամբ հայ և եզդի քաղաքացիների միջև ծագած միջադեպերի շուրջ /որոնք ազգամիջյան բնույթ չեն կրում, կապված չեն ազգային փոքրամասնությանը պատկանելու կամ չպատկանելու հետ և տեղի են ունեցել կենցաղային հողի վրա/ ներքին գործերի մարմինների կողմից կազմվել են նյութեր, առանձին դեպքերում հարուցվել են քրեական գործեր, և դրանց ընթացք է տրվել օրենքով սահմանված կարգով /Կարծիքի 41 և 97 կետեր/

Հատկանշական է այն, որ խտրականության յուրաքանչյուր դեպք ըստ արժանվույս ուշադրության է արժանանում ներքին գործերի մարմինների կողմից: ՀՀ Եզդիների Ազգային Միության նախագահ Ազիզ Թամոյանի դիմումների շուրջ ՀՀ ՆԳ նախարարության կողմից կատարվել են բազմակողմանի ուսումնասիրություններ, կազմվել են համապատասխան նյութեր: Ուսումնասիրությունների ընթացքում ՀՀ ՆԳՆ հարցման հիման վրա ստացվել են Ա. Թամոյանի կողմից բերված փաստարկների վերաբերյալ Արմավիրի, Կոտայքի, Արարատի մարզպետների մեկնաբանությունները: Վերցվել են բազմաթիվ բացատրություններ ազգությամբ եզդի ՀՀ քաղաքացիներից, որոնց նկատմամբ, համաձայն դիմումների, իբր ցուցաբերվել է խտրականություն:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Ա. Թամոյանի կողմից դիմումներում բերված փաստարկները մեկնաբանվել են միակողմանի:

Բացի այդ, Ա. Թամոյանը դիմել է ՀՀ Վարչապետին և ՀՀ ՆԳ նախարարին, որ Կոտայքի մարզում արտավայրերի հատկացման հարցում եզդիների նկատմամբ ցուցաբերվել է խտրականություն: Դիմումի հիման վրա ներկայումս ՆԳ նախարարության կողմից կատարվում են ուսումնասիրություններ: Արդյունքները կամփոփվեն մոտ ժամանակներս:

3. 5-րդ հոդվածի կապակցությամբ

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքի նախագիծը առաջին ընթերցմամբ ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Օրենքի նախագիծը մասնավորապես նախատեսում է պետական ծրագրով աջակցություն ազգային փոքրամասնությունների մշակույթին:

Հարկ է նշել, որ 2002 թվականի ընթացքում նախորդ տարիների համեմատ պետության կողմից ավելի շատ ֆինանսական աջակցություն է տրվել ազգային փոքրամասնությունների մշակութային գործունեությանը:

Հայաստանի իշխանությունները միջոցներ են հայթայթում ազգային փոքրամասնությունների մշակութային կենտրոն ստեղծելու ուղղությամբ:

4. 6-րդ հոդվածի կապակցությամբ

Կրոնական անհանդուրժողականություն

Հայաստանում գոյություն չունի կրոնական անհանդուրժողականություն: Նման անհանդուրժողականության հնարավորությունը չի բացառվում որևէ պետությունում:

⁴ Մասնավորապես գործող Սահմանադրությամբ նախատեսված չէ Օմբուդսմենի ընտրություն Ազգային ժողովի կողմից: Միաժամանակ նախատեսված չէ Օմբուդսմենի կողմից սահմանադրական դատարան դիմելը ներկա սահմանադրությամբ:

Հայաստանի իշխանությունները հաստատակամորեն որդեգրել են կրոնական փոքրամասնության նկատմամբ անհանդուրժողականության կանխման և արգելման քաղաքականությունը:

5. 9-րդ հոդվածի կապակցությամբ

Հայաստանի Հանրապետության որևէ օրենքով սահմանափակված չէ ազգային փոքրամասնություններից որևէ մեկի իրավունքը՝ ստեղծելու ամբողջ Հանրապետությունում սփռվող հաճախականությամբ հեռուստաընկերություն, ռադիո, մամուլ և այլ ՉԼՄ՝ տվյալ փոքրամասնության լեզվով կամ իրականացնելու որևէ այլ իրավունք պետական և հասարակական կյանքի ցանկացած բնագավառում: Իսկ պետությունն իր հնարավորությունների շրջանակներում համապատասխան ժամաքանակներով հաղորդումներ է նախատեսում ազգային փոքրամասնությունների լեզուներով ինչպես հանրային հեռուստատեսությամբ, այնպես էլ հանրային ռադիոյով, որը չենք կարծում, որ ինչ-որ չափով հակասում է Շրջանակային կոնվենցիայի դրույթներին զուտ այն պատճառով, որ ժամաքանակի տևողությունը կարճ է:

Փոքրամասնությունների լեզվով հեռուստահաղորդումների ծավալի ընդլայնման անհրաժեշտության հետ կապված, հարկ է նշել, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 28-րդ հոդվածը, բացի հանրային հեռուստատեսությամբ՝ շաբաթական մինչև մեկ ժամ եթերային ժամանակ, ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրեր և հաղորդումներ հեռարձակելու համար տրամադրելը, նաև նախատեսում է այնպիսի հաղորդաշարերի և հաղորդումների տեսակների մատուցումը հեռուստալսարանին, որոնք հաշվի են առնում ազգային փոքրամասնությունների, հասարակական տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը:

Միաժամանակ օրենքի 28-րդ հոդվածը նախատեսում է Հանրային հեռուստատեսության և ռադիոյի օրվա եթերաժամի առնվազն երկու երրորդի հատկացումը հայրենական արտադրության հաղորդումներին: Դա լրացուցիչ հնարավորություն է հեռուստաեթերով ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումներ հեռարձակելու, քանզի «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում ասվում է, որ հեռուստառադիոհաղորդումների լեզվի վերաբերյալ սահմանափակումները չեն տարածվում ազգային փոքրամասնությունների լեզուներով տրվող հաղորդումների վրա:

Այս առումով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով նախատեսված անցումային դրույթների պահանջները (մինչև 2004թ.՝ 55%), ոչ թե էլ ավելի սահմանափակում են ազգային փոքրամասնությունների ներկայության հնարավորությունները հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերությունների եթերում, այլ ընդլայնում են այդ հնարավորությունները, քանզի, ըստ վերը նշված դրույթների, ազգային փոքրամասնությունների լեզվով տրվող կամ նրանց նվիրված, նրանց մասնակցությամբ հաղորդումները հայրենական արտադրության հաղորդումներ են: Հարկ է նշել, որ բացի ազգային փոքրամասնություններին նվիրված հաղորդումների, հանրային հեռուստատեսության «Հայլուր» լրատվական հաղորդումը թողարկվում է նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով: Հանրային ռադիոն ունի անենօրյա հաղորդումներ (15 րոպե տևողությամբ) ռուսերեն, վրացերեն, քրդերեն, եզդիերեն, պարսկերեն, արաբերեն, ադրբեջաներեն, թուրքերեն, իսպաներեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով⁵:

⁵ Այսօր Հայաստանում իրականացվում է CNN, RFI, OPT, HTB, MY3-TB ծրագրերի ամբողջական հեռարձակում (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն) և PEH TB, TBՃ «Դինամիտ ՖՍ», «Հիթ ՖՍ», «Մայակ», «BBC» (ռուսերեն), «Եվրոպա +», «Ազատություն ռադիոկայան», «Ռուսսկոյե ռադիո», «Միր», «MEZZO», (ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, իտալերեն), MTV(անգլերեն, ռուսերեն), DW(գերմաներեն) ծրագրերի մասնակի վերահեռարձակում: Իսկ եթերամալուխային հեռուստատեսությամբ վերահեռարձակվում են նաև «HTB+cnop3», Euro Sport, Fox Sports, MTB. Vhi, Animal Planet հեռուստածրագրերը: Հարկ է նշել, որ 2002թ. հանձնաժողովի կողմից լիցենզավորվել է «Ռադիո Վան» ՍՊԸ-ն, որի եթերի 90%-ը զբաղեցնում են ռուսալեզու ռադիոհաղորդումները, հասցեագրված Հայաստանում բնակվող այլազգի ներկայացուցիչներին (ըստ ՀՈԱՀ ներկայացրած գրության 16 ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների անունից)

Վերոնշյալ բազմազանության մեջ գերակայողը, անշուշտ, ռուսերեն լեզվով տրվող հաղորդումներն են, սակայն, ինչպես հայտնել են Խորհրդատվական կոմիտեին հենց իրենք՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, ռուսերենը նրանց համար հանդիսանում է ազգամիջյան շփման լեզու:

Ասվածի առումով գտնում ենք, որ ազգային փոքրամասնությունների լեզվին տրամադրված հեռահաղորդակցման ժամանակի առումով օրենսդրական խոչընդոտներ չկան:

Հայաստանին առաջարկվել է ավելի մեծածավալ օժանդակություն ցուցաբերել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնավոր էլեկտրոնային լրատվամիջոցներ ստեղծելու համար: Սակայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիայի մեկ տեսակ, որը տրվում է իրավաբանական անձին մրցութային կարգով: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող են դառնալ լիցենզիատ, եթե ապահովեն օրենքի տվյալ պահանջը: Նշենք, որ հայտարարված մրցույթներում նման հավակնորդներ չի հայտ չեն ելել:

Բացի դրանից՝ նախատեսվում է ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակեցման վայրերում տեղական հաճախություններով հասցեագրված մրցույթներ հայտարարելը:

Նշենք, որ համաձայն ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թվականի դեկտեմբերի վավերացրած «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիայի» և կցվող ՀՀ հայտարարության, հանրապետությունում փոքրամասնությունների լեզուներ են ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը: Սրանով իսկ ՀՀ օրենսդրությունը արտոնյալ պայմաններ է ստեղծում համեմատաբար մեծաթիվ ազգային համայնքների համար:

6. 12-րդ հոդվածի կապակցությամբ

Ազգային փոքրամասնությունների լեզուներով դպրոցներ բացելու գործը դժվարանում է այն հանգամանքով, որ ազգային փոքրամասնությունները բացարձակ թվով բավականաչափ փոքրաթիվ լինելով հանդերձ Հայաստանում բավականաչափ ցրված են բնակվում, ուստի տեխնիկապես անհնար է դառնում այս կամ այն ազգային փոքրամասնության համար բավարար թվով (թեկուզև շատ փոքր թվով) առանձին դասարանի բացումը:

Ազգային փոքրամասնությունների ազգային լեզվի /ասորերեն, եզդիերեն/ ուսուցումը կարգավորվում է 2002-2003 ուստարվա ուսալանով, ըստ որի ազգային փոքրամասնություններով համալրված դպրոցներում /դասարաններում/ ռուսաց լեզվին և գրականությանը տրված ժամաքանակից երկուական ժամ՝ 1-4-րդ դասարաններում, մեկական ժամ՝ 5-10-րդ դասարաններում կարող են հատկացնել ազգային լեզվին և գրականությանը, 7-րդ և 8-րդ դասարաններում դպրոցները /դասարանները/ ընդհանուր պատմությանը հատկացվող ժամաքանակից մեկական ժամ կարող են հատկացնել ազգային պատմության ուսումնասիրմանը՝ ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում /Կարծիքի 119 կետ/:

Կարծիքի 65 կետն անհրաժեշտ է որոշակի մեկնաբանման. դպրոցական քննությունները կազմակերպվում են ոչ թե բացառապես հայերենով, այլ ըստ ուսուցման լեզվի: Ռուսերենով ուսուցմամբ դպրոցներում /դասարաններում/ ռուսաց լեզվով, հայկական դպրոցներում՝ հայոց լեզվով:

Բացի դա, կրթության բնագավառում ՀՀ որևէ ազգային փոքրամասնության համար որևէ արգելք չկա, որովհետև ՀՀ այլ քաղաքացիների հետ նրանց հավասար հնարավորություններ է տված ցանկացած մակարդակի կրթություն ստանալու համար և Շրջանակային կոնվենցիան չի պարտավորեցնում, որ որևէ մասնակից պետություն դրա համար ինքը ստեղծի ազգային փոքրամասնությունների լեզուներով բուհեր կամ այլ աստիճանի ուսումնական հաստատություններ: Բայց նման հնարավորություններ ունեն ազգային փոքրամասնություններն իրենք:

Կոմիտեի կողմից արտահայտված այն անհանգստությունը, որ ազգային փոքրամասնությունները փաստացի հնարավորություն չունեն սովորելու իրենց մայրենի լեզուներով, փարատվում է վերը նշված օրենքի նախագծով: Օրինագծում նշվում է, որ ազգային փոքրամասնության ներկայացուցիչների երեխաները հանրակրթական դպրոց են ընդունվում իրենց մայրենի լեզվով դասարաններում, եթե այդպիսիք կան: Դրանց բացակայության պայմաններում միայն վերջիններս ընդունվում են պետական լեզվով ուսուցմամբ դպրոց կամ դասարան (հոդված 13):

Այդ նույն հոդվածում նշվում է նաև, որ «գլխավորապես ազգային փոքրամասնություններով բնակեցված կամ նրանց զգալի թվի առկայություն ունեցող համայնքներում, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից իրենց լեզվով դպրոց (դասարան) կամ մայրենի լեզվի ուսուցման դասընթաց բացելու նախաձեռնություն ցուցաբերելու և, օրենսդրությամբ սահմանված կարգով կրթության գործի կառավարման պետական լիազորված մարմնի դիմելու դեպքում, պետությունը պարտավոր է այդ համայնքներին ցուցաբերել ֆինանսական և գիտամեթոդական օգնություն՝ հանրակրթական դպրոցների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմատիվների սահմաններում»: Ինչ վերաբերվում է բուհական ընդունելության քննություններին, ապա հայերենով դրանց կազմակերպումը խտրականության դրսևորում է հետևյալ առումներով՝ դիմորդների 98-99 % -ը հայեր են, համապատասխան ազգային լեզուներով պրոֆեսորադասախոսական կադրեր չկան այդպիսի քննություններ կազմակերպելու համար: Հայաստանում գործում են նաև մի շարք միջազգային և օտարերկրյա ԲՈՒՀ-եր, որտեղ և ընդունելությունը, և ուսուցումը իրականացվում է ոչ հայերենով: Ցանկության դեպքում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող են ԲՈՒՀ-ական կրթության իրենց բացը լրացնել այդ ԲՈՒՀ-երում, մանավանդ, որ ազգային փոքրամասնությունների զգալի մասը հատուկ հակվածություն ունեն ռուսերենի նկատմամբ:

Այդ առումով համաձայն չենք Կոմիտեի արած այն դիտողության հետ, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից շատերը խուսափում են հայերեն լեզվով սովորելուց՝ այդ լեզվով դասագրքեր չլինելու պատճառով: Այդ պնդումը չի համապատասխանում իրականությանը:

9. 15-րդ հոդվածի կապակցությամբ

Կոմիտեի այն դիտողությունը, որ ազգային փոքրամասնությունները ներկայացված չեն խորհրդարանում կամ որևէ այլ կառավարական մարմնում ևս ընդունելի չէ, որովհետև այն ոչ թե հայերի կողմից իրականացվող խտրական քաղաքականության, այլ օբյեկտիվ իրողության հետևանք է:

Ինչպես նշել ենք, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները ազգային փոքրամասնությունների համար սահմանել են բացարձակապես հավասար քաղաքական իրավունքներ, այդ թվում՝ ընտրելու և ընտրվելու:

Հանրապետության օրենսդիր մարմնում ներկայացուցչություն չունենալը ևս կապված է ազգային փոքրամասնությունների խիստ փոքրաթվության և ցրվածության հետ: Այս իրողության պայմաններում վերջիններիս քվոտայով տեղեր հատկացնելը, ենթադրում է նրանց համար ընտրության հատուկ իրավունքի և մեխանիզմների սահմանում, որի դեպքում ոտնահարվում են բնիկ մեծամասնության շահերը:

Գործադիր իշխանության և այլ կառավարական մարմիններում ևս աննպատակահարմար է քվոտայի կիրառումը, որովհետև վերջիններիս ձևավորման հիմքում դրված է պրոֆեսիոնալիզմի սկզբունքը և ոչ ոք չի խանգարում ազգային փոքրամասնության ներկայացուցչին համապատասխան մասնագիտական որակներ ունենալով զբաղեցնել այս կամ այն պաշտոնը: Մանավանդ, որ ներկայումս Հայաստանում սկսվել է ներդրվել քաղաքացիական ծառայության համակարգը, որով առավել ևս օբյեկտիվացվում է պետական ծառայության անցնելու գործընթացը: